



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

31.08.2021 թ.

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶ ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ  
ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Շնորհավորում եմ Գիտելիքի և դպրության և նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ:

Համավարակով պայմանավորված՝ մեր առաջին դասարանցիների համար նոր ուսումնական տարին այսօր է սկսվում, ուստի նախնառաջ ուզում եմ շնորհավորել մեր ամենակրտսեր դպրոցականներին:

Միրելի՛ առաջին դասարանցիներ,

Ձեզ համար այսօր բացվում է նոր աշխարհ՝ գիտելիքի աշխարհ, ու ես ցանկանում եմ, որ այն ձեզ համար լինի բացահայտումների, հետաքրքրությունների ու գիտելիքների ամբարման շտեմարան:

Սովորեք, ինքնակրթվեք, զարգացեք, հարգեք ձեր ուսուցիչներին ու նրանցից քաղեք ամենակարևորը՝ գիտելիքը, քանզի գիտելիքակենտրոն հասարակությունն անհաղթ է, իսկ մենք այսօր հենց ուժեղ ու կրթված հասարակության կարիքն ունենք:

Առանձնահատուկ շնորհավորում եմ նաև մեր առաջին կուրսեցիներին ու, առհասարակ, կրթության ոլորտի բոլոր ներկայացուցիչներին՝ մանկավարժներին, ուսանողներին, աշակերտներին ու նրանց ծնողներին և մաղթում, որ հետպատերազմական և համավարակով պայմանավորված այս բարդ ժամանակահատվածում ձեր մեջ ուժ և կամք գտնեք՝ արարելու, աշխատելու, սովորելու և սովորեցնելու:

Խոնարհումս նաև կովի դաշտում ընկած մեր բոլոր հերոս սղանների հիշատակի առջև, որոնցից շատերը սովորում էին ԲՈՒՀ-երում:

Շնորհավո՛ր Գիտելիքի օր:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ